ՁԻՍԿԱԾԵԿԱՅՆՔ ՕԳՈՒՄ ԼԻ

«Ո՞ր հինչը՞ս ընեան» հարցը ստեփանակերտցի երիտասարդի համար ամենադժվար ու շատ հաճախ պատասխան չունեցող հարցերից մեկն է: Դասերը վերջացնելուց հետո ստեփանակերտցի երիտասարդը պրակտիկորեն ազատ է եւ գնալու տեղ չունի, որովհետեւ մայրաքաղաք համարվող Ստեփանակերտում չկա դիսկոտեկ կամ կինոթատրոն, երիտասարդական կենտրոններ եւ այլ ժամանցի վայրեր, որոնք անհրաժեշտ են նորմալ ժամանակակից երիտասարդին, ինչու չէ՝ նաեւ չերիտասարդին: Եւ արդեն տարիներ շարունակ ղարաբաղցի երիտասարդների հիմնական զբաղմունքը հրապարակում քայլելն է՝ կողքից դիտողի մոտ հատակ չափագրողի տպավորություն թողնելով: Իսկ «պիտաչոկ» կոչվող միակ պուրակում այդպես էլ չեն վերանում արեւածաղկի կեղեւները, եւ այնտեղ աշխատող հավաքարարը շատ վաղուց դադարել է նկատողություն անել այգում նստածներին կամ զբոսնողներին՝ հասկանալով երեւի, որ դրանով կգրկի ճարահատյալ երիտասարդին եւս մեկ ժամանցի վայրից ու տեսակից:

Մայրաքաղաքաբնակ Մարինե Ղազարյանը զզվանքով է խոսում իր արդեն ավանդական դարձած պարապության մասին: «Մեր միանման ինքնագործ երեկույթներից արդեն հոգնել ենք, նոր միջավայր ենք ուզում, նոր ծանոթություններ: Իսկ դրա համար անհրաժեշտ է ընդամենը մեկ ակումբ, որտեղ երիտասարդները կկարողանան զվարճանալ», -երանությամբ ասում է հետաքրքիր ժամանց տենչող Մարինեն: Ստեփանակերտում, իհարկե, կան ինչ-որ ժամանցի վայրեր. լողավազաններ, որտեղ, սակայն, հիմնականում տղաներն են զվարճանում, ասել է թե՝ աղջիկների տեղը չէ: Սրճարաններ, որոնք ընդամենը մի քանիսն են, այն էլ՝ դեռեւս սպիտակ պլաստմասսայե աթոռներով կահավորված, թատրոն, որտեղ տարին մի քանի անգամ է ներկայացում լինում, այն էլ՝ հնացած ռեպերտուարով, ինչը ժամանակակից երիտասարդին հետաքրքիր չէ, համերգային ծրագրեր, որին մասնակցում է հայաստանցիներին անհայտ, բայց ստեփանակերտցիների համար արդեն ավելի քան փոփ-աստղ դարձած Կարեն Գալուլյանը կամ տեղացի երգիչ-երգչուհիներ, որոնց համերգային պարունակությունը ոչ ոքի վաղուց չի զարմացնում, կինոդահլիճ, որտեղ, բարեբախտաբար, միայն ուրբաթ օրերին են ֆիլմ ցուցադրում, որովհետեւ հազիվ թե որեւէ մեկը ցանկություն ունենա ամեն օր գնա մարտաֆիլմ դիտելու: Քաղաքում գործող միակ գիշերային ակումբը, որը հասցրեց ընդամենը մի քանի ամսով կոտրել ժամանցային միապաղաղությունը, վերջերս փակվել է: Ակումբի տիրոջ խոսքերով՝ ոչ ձեռնտու եկամտի պատճառով է փակվել, բայց, ըստ քաղաքում տարածված ասեկոսեների, իշխանություններն են միջամտել դադարեցնել աշխատանքը, քանի որ լիցենզիա չուներ: Իսկ լիցենզիա ստանալու գործընթացները կարգավորող օրենք էլ դեռ չկա:

Վերջերս ԼՂՀ երիտասարդության հարցերի բաժինը երիտասարդների շրջանում սոցհարցում է անցկացրել՝ պարզելու համար, թե ի՞նչ կուզենային երիտասարդներն իրենց ազատ ժամանակը հետաքրքիր անցկացնելու համար: Չնայած արդյունքները պաշտոնապես դեռ չեն հրապարակվել, բայց ասում են՝ տեղացի երիտասարդների մեծ մասը դիսկոտեկ է ուզում եւ սեփական բնակարան:

Ավելի ունեւոր երիտասարդներն իրենց ժամանցը նախընտրում են անցկացնել Երեւանում: Օրինակ, Էրիկ Մարտիրոսյանն ամիսը գոնե մեկ անգամ հատուկ մեկնում է Երեւան, ինպես ինքն է ասում՝ պարելու. «Ստեղ ամեն ինչ կա, բացի գլամուրնի օբյեկտներից: Իսկ Երեւանում կրուգոմ գլամուրնի կլուբներ ա, ստեղ սըրտդ օզում ա քյինա, թաքյի փող ինի ջուբումդ»,- ասում է ղարաբաղցի «գլամուրնի» երիտասարդը՝ խոստովանելով, որ «ընդամենը 100 հազ. դրամով կարելի ա նարմալնի տժժացած»:

Մի խումբ երիտասարդներ էլ իրենց ժամանակը նախընտրում են անցկացնել ինտերնետ-ակումբներում, որի պակասը քաղաքում հաստատ չի զգացվում: «odnoklassniki.ru» կայքի մոլի երկրպագու Վահրամ Կարապետյանն ասում է, որ իրեն ոչ մի «գլամուրնի տեղեր» էլ պետք չեն, ինքը գոհ է իր անցկացրած ժամանցից եւ հաճույքով էլ մինչեւ ուշ գիշեր նստում է համակարգչի դիմաց. «Դե, արդեն սովորել եմ էս ապրելակերպին, աղջիկների հետ եմ ծանոթանում, ընկերներիս հետ եմ զրուցում իտերնետով, որ ինձ նման իրենց ժամանակն անց են կացնում կայքերում, կամ էլ խաղեր եմ խաղում, որից պոկվելը դժվար է»,- ասում է 20-ամյա երիտասարդը, որը սովորում է պետհամալսարանի իրավաբանական ֆակուլտետում:

Մոսկվայաբնակ բիզնեսմեն Նարինե Դավթյանի խոսքերով՝ առաջիկայում Ստեփանակերտում կառուցվելու է երիտասարդական հզոր կենտրոն, որտեղ լինելու են ժամանցի տարբեր տեսակներ՝ տարբեր ճաշակի տեր երիտասարդների համար. «Ես ուզում եմ, որ ղարաբաղցի երի-



տասարդները այդ կենտրոնում գտնեն այն, ինչը վաղուց են փնտրում՝ հաճելի ժամանց»: Ղարաբաղին սիրահարված բիզնեսմենի խոսքերով՝ երիտասարդական համալիրում կլինեն պարային ակումբներ, կինոդահլիճ, մոդելավորման ստուդիա, համերգային սրահ, ինչպես նաեւ կթողարկվի երիտասարդական ամսագիր: Բայց ղարաբաղցի երիտասարդները, շունչները պահած, սպասում են ոչ թե այս կենտրոնի բացմանը, այլ եղանակների տաքացմանը, որ գոնե հասցնեն գժություններ անել բնության գրկում որեւէ գետակի ափին, թե չէ եթե սպասեն շինարարության ավարտին, գուցե արդեն երիտասարդ չլինեն...

Լուսինե ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ